ԼԻԼԻԱ ՀԱՐ
ՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԵԳԻՊՏՈՍՈՒՄ «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՆԱՆ» ԿՈՆՖԼԻԿՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

DOI:10.24234/journalforarmenianstudies.v1i68.157

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկվում են Մերձավոր Արևելքում, մասնավորապես Եգիպտոսում 21-րդ դարի առաջին, երկրորդ տասնամյակներում տեղի ունեցած և «Արաբական գարուն» անվանումը ստացած հեղափոխական շարժումների (կոնֆլիկտի) քաղաքական, սոցիալ-տնտեսական պատճառներն ու հետևանքները: Հոդվածի հիմնանպատակը հասարակական ընդվզումների, բողոքի ակցիաների ուսումնասիրման ուղղությամբ գիտության մեջ առկա տարբեր մասնագետ-հետազոտողների մոտեցումների համեմատական վերլուծությունն է: Եգիպտոսում հասարակական ընդվզումների պատճառականությունը, դրսևորումների ձևերը ուսումնասիրել, վերլուծել ենք խմբային վարքի մեթոդաբանության, դեպրիվացիայի տեսության, ռեսուրսների մոբիլիզացիայի հիմնադրույթների, ամբոխի հոգեբանության համատեքստում:

Ուսումնասիրության արդյունքում հանգել ենք եզրակացության, որ բնակչության աղքատությունը, ցածր կրթական ցենզը, գործազրկության մեծ տոկոսը, գնաճը, սոցիալական ապահովության մեխանիզմների բացակայությունը, կոռուպցիան այն հիմնական պատճառները չէին, որոնք, ինչպես ասում են, իրենք իրենցով հիմք դարձան Եգիպտոսում 2010-2011 թվականների հեղափոխության և ընդվզումների համար: «Արաբական գարնան» կոնֆլիկտի պատճառականության մեջ հիմնարար դեր ունեցան սոցիալ-հոգեբանական գործոնները՝ խմբային վարքի, դեպրիվացիայի, ռեսուրսների

մոբիլիզացիայի, ամբոխի հոգեբանական առանձնահատկություններն ու մեխանիզմները: Ընդվզումների, բողոքի ակցիաների մասնակից բնակչության հուզականության բարձրացման նպատակով օգտագործվում էին վերոնշյալ սոցիալ-հոգեբանական երևույթների ազդեցության մեխանիզմները: Վերջիններիս ազդեցությունն ընդլայնելու, դրանց գործառնության արդյունավետությունն ապահովելու նպատակով հատուկ միջամտություններ էին իրականացվում նաև արտաքին ուժերի կողմից:

Բանալի բառեր և արտահայտություններ. *«Արաբական գարուն», կոնֆլիկտ, սոցիալ-հոգեբանական, Եգիպտոս, ամբոխ, աղքատություն, հեղափոխություն:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Արաբական գարուն» արտահայտությամբ անվանում են 2010-2011 թվականներին Մերձավոր Արևելքում տեղի ունեցած հեղափոխական շարժումները:

Եգիպտոսում 2011 թ. տեղի ունեցած հեղափոխության պատճառների վերլուծության համար առանձնացվում են մի շարք բաղադրիչներ՝ սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-դեմոգրաֆիական, քաղաքական:

Ըստ որոշ վերլուծաբանների՝ հեղափոխության հաջողությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով. հասարակության հիմնական հատվածը չի վստահում իշխանությանը, նրա հետ չի կապում երկրի ապագան, ավելին. գտնում է, որ այդ իշխանությունը վտանգում է պետության ապագան:

Սույն հոդվածում ներկայացվում են հեղափոխության և ընդվզումների պատճառները, հոգեբանական տարբեր երևույթների ազդեցության մեխանիզմները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Գիտության մեջ առկա են տարբեր մոտեցումներ հասարակական ընդվզումների, բողոքի ակցիաների ուսումնասիրման ուղղությամբ: Մոտեցումներից մեկի համաձայն հասարակական ընդվզումների

պատճառականությունը, դրսևորումների ձևերը ուսումնասիրվում, վերլուծվում են խմբային վարքի մեթոդաբանության համատեքստում: Այստեղ որպես մեթոդաբանական հիմք ընդունվում են սոցիալական հոգեբանության մեջ առկա վարքաբանական տեսությունները, սոցիալ-հոգեբանական, քաղաքական գործոնները, ամբոխի հոգեբանության առանձնահատկությունները:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

«Արաբական գարուն» արտահայտությամբ անվանում են 2010-2011 թվականներին Մերձավոր Արևելքում տեղի ունեցած հեղափոխական շարժումները, որոնք հետագայում ստացան տարբեր որակումներ՝ կապված հեղափոխական գործընթացների, անհնազանդության ակցիաների, բողոքի, դժգոհության շարժումների հետ **(Ермина Н., 2021)**: Տարբեր մասնագետների կողմից ներկայացվող տեսակետների, մոտեցումների համաձայն՝ «Արաբական գարունը» որպես հեղափոխություն բնորոշելը դժվար է: Այն անվանում են սոցիալ-քաղաքական ցնցումների ուղի **(Верюгин И., Турк С., 2020)**, համակարգային սոցիալական երևույթ, որը պայմանավորված է բազմաթիվ փոխկապակցված և՛ գլոբալ, և՛ տարածաշրջանային, և՛ ազգային գործոններով:

Գիտության մեջ առկա են տարբեր մոտեցումներ հասարակական ընդվզումների, բողոքի ակցիաների ուսումնասիրման ուղղությամբ: Դրանց համաձայն տարբեր երկրներում և տարբեր ժամանակաշջաններում հասարակական ընդվզումները, զանգվածային դժգոհությունները պայմանավորված են հիմնականում արդարության պահանջով, որը լրջագույն մոտիվացիա է դառնում յուրաքանչյուր քաղաքացու համար պայքարի դուրս գալու: Իսկ արդեն փողոցում անձը կարող է դադարել ինքն իրենով, իր անձով հանդես գալը, դադարել վերահսկել իր վարքը և դառնալ ամբոխի մաս, կորցնել գիտակցական ինքնավերահսկողությունը, ամբողջությամբ ուղղորդվել հույզերով: Նման դեպքերում տեղի է ունենում հոգեբանական վարակ՝ ագրեսիայի տարածում:

Մյուս մոտեցումը վերաբերում է դեպրիվացիայի տեսությանը, որում կարևորվում են սոցիալ-տնտեսական ցուցանիշները, երկրի բնակչության մասնակցությունը քաղաքական որոշումներին, նրանց սոցիալական կարգավիճակի փոփոխությունը, արժեքային կողմնորոշումները, իրավունքների պաշտպանությունը:

Հաջորդը ռեսուրսների մոբիլիզացիայի տեսությունն է: Համաձայն վերջինիս՝ բողոքը դիտարկվում է որպես մարդու իրավունքների խնդիրներով պայմանավորված դժգոհություններ ունեցող սոցիալական խմբերի ընդվզում: Վերջիններս սկսում են գիտակցել, որ իրենց երկրում մարդու իրավունքները իսկապես չեն պահպանվում, ընդ որում, դրանք վերաբերում են միայն սոցիալական որոշ խմբերի: Կամաց-կամաց առաջացող դժգոհությունը կարող է խորանալ և ընդգրկել ավելի լայն շրջանակներ: Այս դժգոհությունն ավելի է խորանում, երբ երկրում չի ձևավորվում իշխանության և բնակչության միջև համապատասխան երկխոսություն: Ավելին. առաջանում են հակասություններ նաև, այսպես կոչված, էլիտաների միջև: Նրանք իրենց հերթին դժգոհում են արդարությունից, որի ընկալումը տարբերվում է հասարակության ցածր խավերի համեմատ: Իհարկե, էլիտաների միջև պայքարը հետապնդում են իշխանության, կառավարման ոլորտում ազդեցությունների ուժեղացման, կապիտալի վերաբաշխման նպատակ: Որպես կանոն, բնակչությունը չի ընդունում այն իշխանություններին, որոնք կոշտ որոշումներով սահմանափակում են իրենց ազատությունները:

Եգիպտոսում 2011 թ. տեղի ունեցած հեղափոխության պատճառների վերլուծության համար առանձնացվում են մի շարք բաղադրիչներ՝ սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-դեմոգրաֆիական, քաղաքական: Տարբեր մասնագետներ, վերոնշյալ պատճառներն ավելի կոնկրետացնելով, առանձնացնում են բնակչության աղքատությունը, ցածր կրթական ցենզը, գործազրկության մեծ տոկոսը, գնաճը, սոցիալական ապահովության մեխանիզմների բացակայությունը, կոռուպցիան **(Вольский А., 2011; Нейжмаков**

M., 2011; Коротаев А., Зинькина Д., 2011; Akaev A., Sadovnichy V., Korotayev A., 2012): Եգիպտոսում նախագահը և իշխող ուժը երկար տարիներ քաղաքական դաշտում և տնտեսության ոլորտում չեզոքացրել էին այլընտրանքը. Հոսնի Մուբարաքը իշխանության ղեկին էր 1981 թվականից (1975-1981թթ.-ին երկրի փոխնախագահ): Թեև պետք է նշել, որ երկրում նրա նախագահության տարիներին տնտեսական ցուցանիշները բարձր էին երրորդ աշխարհի երկրների համեմատ**(Коротаев А., Зинькина Ю., 2011):** Լ.Ե Գրինին, Ա.Վ Կորոտաևը գտնում էին, որ 2010-2011 թթ. արաբական որոշ երկրներում տեղի ունեցողն աշխարհի համակարգային փոփոխության սկիզբն էր **(Grinin L., Korotayev A., 2011)**: Ջ. Լանգի և Խ. դե Ստերկի մոտեցման համաձայն՝ արաբական գարնան հիմնական պատճառները դիկտատուրան և ոստիկանական ճնշումներն էին այդ երկրներում: Բնակչությունը դուրս եկավ պայքարի հենց դրանց դեմ՝ օգտագործելով համացանցի, այլ ցանցերի, մեդիայի հնարավորությունները **(Lang J., De Sterck H., 2014)**: Հետաքրքիր է նաև ամերիկացի սոցիոլոգ Ջ. Գոլդսթոնի հեղափոխությունների մեկնաբանությունները: Նա իր մոտեցումների համար դիմում է կայուն և ոչ կայուն հավասարակշռություն հասկացություններին: Նա առանձնացնում է անկայուն հավասարակշռության իրավիճակի ձևավորման համար 5 հիմնական անհրաժեշտ պայման՝ 1-ին՝ տնտեսական և ֆինանսական ոլորտներում խնդիրներ, 2-րդ՝ էլիտարների միջավայրում աճող օտարացում և ընդդիմադիր տրամադրություններ, 3-րդ՝ հեղափոխական մոբիլիզացիա, որի հիմքը ժողովրդական աճող հուզումներն են անարդարությունից, 4-րդ՝ գաղափարախոսություն, հակազդման աճ, 5-րդ՝ միջազգային բարենպաստ իրավիճակ **(Goldstone J., 2014)**: Ըստ Ջ. Գոլդսթոնի՝ հեղափոխության հաջողությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով. հասարակության հիմնական հատվածը չի վստահում իշխանությանը, նրա հետ չի կապում երկրի ապագան, ավելին. գտնում է, որ այդ իշխանությունը վտանգում է պետության ապագան, վերնախավը կամ էլիտաները չեն պաշտպանում պետությունը, ավելանում է հասարակության մեջ դժգոհողների թիվը, միջազգային ուժերը կամ

չեն միջամտում կամ օգնում են հեղափոխականներին **(Goldstone J., 2011)**: Կ.Բեկի կարծիքով՝ «Արաբական գարունն» իսկապես նոր բնութագրիչներ ուներ. որպես հեղափոխություն՝ կանխատեսելի չէր: Նա առաջարկում է հեղափոխական տեսության մետահիմքը, որն իր մեջ ներառում է վերլուծության մի քանի մակարդակներ, չափումներ, դրանց փոխազդեցության հաշվառումներ: Կ.Բեկի հետազոտությունն ընդգրկում էր որակական համեմատական վերլուծություն՝ Մերձավոր Արևելքի 16 երկրների և Հյուսիսային Աֆրիկայի: Նա առանձնացրել է հետազոտության արդյունքում ներքին, արտաքին պատճառներ: Նրա համոզմամբ՝ վերոնշյալ երկրներում տեղի ունեցած հեղափոխություններում իրենց առանցքային դերն ունեցան միջազգային մոտեցումները, սցենարներն ու պրակտիկան **(Beck C., 2014)**: Ֆ.Վոլպիի կարծիքով՝ «Արաբական գարուն»-ը վերլուծելիս անհրաժեշտ է հենվել հայտնի կառուցվածքային բացատրական մոդելների վրա **(Volpi F., 2014)**: Ա.Մալկովի ղեկավարած հետազոտական խումբն առանձնացրեց մի շարք պատճառներ արաբական աշխարհում հեղափոխությունների համար՝ քաղաքական ռեժիմի անցողիկ բնույթը, էլիտաների միջև ներքին կոնֆլիկտները, իշխանության փոխանցման մեխանիզմների անկատարությունը, իսլամիստների մասնակցությունը կառավարմանը, փոփոխությունների արդյունքում չիրականացված սպասումները **(Малков С., Исаев Л., Коротаев А., Кузьминова Е., 2013)**: Հետազոտությունների արդյունքում հեղինակային խումբը մշակեց համալիր ինդեքս: Վերջինս ձեռք էր բերվում վիճակագրական տվյալների, փորձագիտական գնահատականների, որակական հետազոտությունների համադրման արդյունքում: Կ. Ույլենդը զուգահեռներ էր տանում արաբական գարնան 2011 և 1848 թվականների հեղափոխությունների միջև: Երկուսի միջև նմանությունն այն էր, որ դրանք արագորեն տարածվեցին հսկայական տարածաշրջաններ, սակայն արդյունքում՝ քաղաքական և տնտեսական առումով, լուրջ փոփոխություններ չբերեցին **(Weyland K., 2012)**: Հետաքրքիր էր, որ Հոսնի Մուբարաքի հրաժարականից հետո էլ ժողովրդավարական արժեքների ու կառավարման սկզբունքների

ներդրման գործընթացը իրականացվում էր հանրային գիտակցության, խմբային սոցիալ-հոգեբանական երևույթների՝ հանրային կարծիքի, տրամադրությունների վրա ազդեցության հոգեբանական տեխնոլոգիաների միջոցով: Օրինակ՝ նախընտրական հանդիպումների, քաղաքական ճառերի մեջ հնչում էին նման մտքեր՝ «ով կքվեարկի հանրքվեի դրույթների համար «կողմ», ապա կհայտնվի դրախտում»: 2012 թ. հասարակական կարծիքի ամերիկյան ինստիտուտի կողմից իրականացված հարցումների համաձայն հարցված եգիպտացիների 11%-ի կարծիքով իրենց երկրում «Արաբական գարնան» իրադարձությունները պայմանավորված էին ոչ այնքան ներքին, որքան արտաքին գործոններով, այլ երկրների ազդեցություններով **(Шангараев Р., Кашина А., 2021)**: Իհարկե, կան նաև այլ կարծիքներ, մոտեցումներ, համաձայն որոնց արտաքին ազդեցությունները պայմանավորված են զուտ այն հանգամանքով, որ եղել է աջակցություն դժգոհող, ցուցարար բնակչությանը, որոնք օբյեկտիվորեն դժգոհ են եղել իշխանության վարած քաղաքականությունից, իրենց սոցիալական վիճակից **(Фитуни Л., 2012)**: Իհարկե, կարևոր է այստեղ ընդգծել, որ արտաքին ազդեցություններ «Արաբական գարնան» իրադարձություններին ունեցել են հատկապես միջազգային ոչ կառավարական կազմակերպությունները: Դրա վառ ապացույցն է հետևյալ տեղեկատվությունը. 2009 թ. Եգիպտոսում միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների թիվը երկրորդն էր Հյուսիսային Աֆրիկայում Թունիսից հետո **(Housseini B., 2009)**: Միջազգային ոչ կառավարական կառավարություններն աջակցել են հիմնականում ֆինանսական միջոցներով, հավաքագրել են մասնագետների, մշակել տեխնոլոգիաներ, կառավարելի դարձրել կամ ուղղորդել քաղաքական գործընթացները՝ ցույցերը, բողոքի ակցիաները, դրանցում կարևորել և ակտիվացրել հոգեբանական, մասնավորապես՝ հուզական բաղադրչիչը, նպաստել հասարակական կարծիքի, տրամադրությունների՝ իրենց համար «ցանկալի» ուղղությամբ փոփոխությանը **(Elagati M., 2013)**: Եգիպտոսում հասարակական կառուցվածքի առանձնահատկություններով պայմանավորված՝ 2011 և 2013 թվականների

հեղափոխությունները չկարողացան լուծել սոցիալ-տնտեսական և քաղաքական իրողությունները՝ գործազրկությունը, սոցիալ-տնտեսական ակտիվությունը, տնտեսական աճը, ժողովրդավարության ճգնաժամը: Եգիպտոսում տնտեսական աճի վերաբերյալ դրական ցուցանիշերը պայմանավորված էին հատկապես 2004 թ. կառավարության կողմից պրոֆեսիոնալ տնտեսագետներին համապատասխան գործընթացներում ընդգրկելու և հաջողված տնտեսական հեղափոխական ծրագիր նախագծելու հանգամանքով **(Boubacar S., Herrera S., Yamouri N., Devictor X., 2010)**: Նույնիսկ համաշխարհային տնտեսության ընդհանուր ճգնաժամի պարագայում Եգիպտոսի համախառն ներքին արդյունքը աճ է գրանցել: Իհարկե, պետք է փաստել, որ ոչ նույն տեմպերով, այլ որոշակի դանդաղումով՝ 7.2-ի փոխարեն տարեկան 4.6% **(Коротаев А., Халтурина Д., 2009)**: Իսկ ահա 2010 թվականին Եգիպտոսի տնտեսության աճի տեմպերը վերականգնվեցին: Իհարկե, ներքին համախառն արդյունքի աճի պատճառներից մեկը նաև Եգիպտոսում ժողովրդագրական աճի հարաբերական տեմպի նվազումն էր **(Коротаев А., Зинькина Ю., 2011)**: Փաստորեն, տնտեսության աճի տեմպերը Մուբարաքի իշխանության օրոք իսկապես բարձր են եղել և 3-րդ աշխարհի երկրների համար նույնիսկ շատ բարձր: Վերջինս նշանակում է, որ հեղափոխության համար տնտեսական հիմքն իրական պատճառ չէր կարող դառնալ: Դրա վառ ապացույցը նաև հեղափոխության հետևանքով նոր իշխանության կողմից լիբերալ բարեփոխումների ծրագրից (2004թ.) չշեղվելու մասին հայտարարությունն էր **(Pitchford R., 2011)**:

Եթե խոսենք հեղափոխության հաջորդ պատճառի՝ կոռուպցիայի մասին, ապա կարող ենք այս դեպքում էլ եզրակացնել, որ թեև այդ տարիներին բարձր է եղել կոռուպցիայի ցուցանիշը Եգիպտոսում՝ 80-րդ տեղ, սակայն նույն կամ համանման մոտ ցուցանիշներ արձանագրվել են նաև 2-րդ և 3-րդ աշխարհի երկրներում՝ Հնդկաստան, Հունաստան, Արգենտինա, Ղազախստան, Չինաստան, Բուլղարիա, Ալժիր, Ինդոնեզիա, Բելառուս և այլն, և չէր կարող հիմնական պատճառ հանդիսանալ **(Transparency International. 2010)**:

Հեղափոխության համար մեր կողմից առանձնացրած հաջորդ պատճառի՝ գործազրկության մասին եթե խոսենք, ապա այն ևս բնորոշ էր 2-րդ և 3-րդ աշխարհի երկրներին: 2005 թ. հետո այն մոտ 12%-ից իջել է մինչև 2010 թվականը՝ կազմել 8.5% **(World Bank, 2011; CAPMAS, 2010)**: Ինչպես կոռումպացվածության, այնպես էլ գործազրկության դեպքում, եթե համեմատում ենք, ապա պարզվում է, որ նախահեղափոխական և հեղափոխական շրջանում Եգիպտոսի ցուցանիշին համանման ցուցանիշներ են գրանցվել նաև Իտալիայում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Բուլղարիայում, Լեհաստանում և այլուր:

Հեղափոխության համար հաջորդ պատճառի՝ տնտեսական անհավասարության պարագայում ևս, ինչպես կոռումպացվածության և գործազրկության դեպքում, Եգիպտոսը հեղափոխության և նախորդող տարիներին վատ ցուցանիշներ չի գրանցել: Համեմատության համար արձանագրենք, որ Եգիպտոսն ավելի լավ տեղում է եղել 2000-2010թթ.-ին, քան Ֆրանսիան, Իռլանդիան, Ալբանիան, Իսպանիան, Իտալիան, ԱՄՆ-ն **(UNDP, 2010)**: Հեղափոխության հաջորդ պատճառը համարվում է աղքատությունը. ժողովրդական հուզումները, բողոքները կառավարության դեմ դրսևորվեցին հենց կենսամակարդակի իջեցման պատճառով: Պարենամթերքի գնաճի պայմաններում բնակչության մեծ զանգվածներ չէին կարողանում բավարարել իրենց նվազագույն պահանջները: Սակայն այս ցուցանիշով ևս Եգիպտոսը 2000-2010 թթ. համարվել է աշխարհում բարվոք վիճակում: Այսպես. Եգիպտոսում բնակչության 2%-ը, որը ապրում է օրական 1.25 դոլարից քիչ գումարով, բավականին քիչ է աշխարհի մասշտաբով և հավասար է Էստոնիայի, Սլովենիայի, Մարոկկոյի, Թունիսի ցուցանիշներին: (UNDP, 2010) Իսկ այնպիսի երկրները, ինչպիսիք են Հայաստանը, Վրաստանը, Բոլիվիան, Ֆիլիպինները, Հնդկաստանը, Լաոսը, Շրի Լանկան, անհամեմատ ավելի վատ ցուցանիշներ են գրանցել այդ տարիներին: Նշենք, որ ՄԱԿ-ի տվյալներով՝ Եգիպտոսի գրանցած ծայրահեղ վատ ապրող բնակչության 2% թվաքանակը, համարվում է աշխարհում ամենաբարենպաստ ցուցանիշներից մեկը: Եթե համեմատենք 3-րդ և 2-րդ

աշխարհի երկրների աղքատ բնակչության հետ, ապա կարող ենք գնահատել, որ իսկապես Եգիպտոսում աղքատ բնակչությունն իր կենսապայմաններով տարբերվում է դրական առումով, ունի էլեկտրականություն, ջուր բնակարանում, կարողանում է սննդամթերքի որոշ չափաքանակ գնել խանութներից: Հետաքրքիր է նաև նշել, որ 2010 թվականին համաշխարհային տնտեսական ճգնաժամի պայմաններում ևս Եգիպտոսում 2 դոլարից պակաս, բայց 1,25 դոլարից բարձր օրական միջոցներով ապրող բնակչությունը 23 %-ից կրճատվել է 19.5 %-ի **(Siam G., Abdel Rady, 2010)**: Նույն աղբյուրի հավաստմամբ՝ համաշխարհային տնտեսական ճգնաժամի պայմաններում պարենային որոշ մթերքների գնիջեցում է տեղի ունեցել Եգիպտոսում, որի արդյունքում մոտ 3 միլիոն բնակիչ աղքատության շեմից հաղթահարած են գնահատվում **(Siam G., Abdel Rady, 2010)**:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրության արդյունքում հանգում ենք եզրակացության, որ բնակչության աղքատությունը, գնաճը այն հիմնական պատճառները չէին, որոնք, ինչպես ասում են, իրենք իրենցով հիմք դարձան հեղափոխության և ընդվզումների համար: «Արաբական գարնան» կոնֆլիկտի պատճառականության մեջ հիմնական դեր ունեցան խմբային վարքի, դեպրիվացիայի, ռեսուրսների մոբիլիզացիայի, ամբոխի հոգեբանական առանձնահատկություններն ու մեխանիզմները: Եգիպտոսում ժողովրդավարական արժեքների ու կառավարման սկզբունքների ներդրման գործընթացը իրականացվում էր հանրային գիտակցության, խմբային սոցիալ-հոգեբանական երևույթների՝ հանրային կարծիքի, տրամադրությունների վրա ազդեցության հոգեբանական տեխնոլոգիաների միջոցով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Верюгин И., Турк С. (2020)**, Арабская весна в Египте: причины и последствия,Эпоха науки, № 22. с. 314-317: DOI 10.24411/2409-3203-2020-12270.
2. **Вольский А. (2011),** Дни гнева. НТВ 06 февраля. URL: http://ip.ntv.ru/news/21442.
3. **Ермина Н. (2021),** «Сверхновая революционная ситуация»: обшественный слом без лидера или управляемая трансформация систем?, РСМД. 13 апреля// URL: https://russianconcil.ru/analytics-and-comments/analytics/sverkhnovaya-revolyutsionnaya-situatsiya-obshchestvennyy-slom-bez-lidera-ili-upravlyaemaya-transform/.
4. **Коротаев А., Зинькина Ю. (2011),** Египетская революция 2011 года: социодемографический анализ, "Историческая психология и социология истории". N2 // URL: https://cyberleninka.ru/article/n/egiptskaya-revolyutsiya-2011-goda-sotsiodemograficheskiy-analiz
5. **Коротаев А., Халтурина Д. (2009),** Современные тенденции мирового развития, Москва, ЛИБРОКОМ/ URSS., 103-116.
6. **Коротаев А., Зинькина Ю. (2011),** Египетская революция 2011 г.. Азия и Африка сегодня. 6(647): 10–16; 7(648): 15–21.
7. **Малков С., Исаев Л., Коротаев А., Кузьминова Е. (2013),** О методике текущего состояния и прогноза социальной нестабильности: опыт количественного анализа событий Арабской весны, Полис. Политические исследования. № 4. С. 137-163.
8. **Нейжмаков М. (2011),** Беспорядки в Египте: кому это выгодно? Rabkor.ru 28 января. URL: http://www.rabkor.ru/debate/11867.html.
9. **Фитуни Л., (2012),** «Арабская весна» в глобальном и региональном измерениях, Протестные движения в арабских странах. Предпосылки, особенности, перспективы. Материалы конференции «Круглого стола». Центр цивилизационных и региональных исследований Института Африки

РАН (30 мая 2011г.) / отв. Ред. И.В.Следзевский, А.Д.Саватеев, Москва, 2012, с. 77.

10. **Шангараев Р., Кашина А. (2021),** Десять лет «арабской весны» в Египте и Тунисе: итоги и перспективы. Обозреватель-Observer. 8/2021, с. 87. DOI: 10.48137/2074-2975_2021_8_81.
11. **Akaev A., Sadovnichy V., Korotayev A. (2012)**, On the dynamics of the world demographic transition and financial-economic crises forecasts. The European Physical Journal Special Topics, 205(1), pp. 355–373. https://doi.org/10.1140/epjst/e2012-01578-2.
12. **Beck C. (2014)**, Reflections on the Revolutionary Wave in 2011. – Theory & Society. 2014. Vol. 43. No. 2. P.197-223. DOI: http://dx.doi.org/10.1007/s11186-014-9213-8.
13. **Boubacar S., Herrera S., Yamouri N., Devictor X. (2010),** Egypt Country Brief. Washington, DC: World Bank. URL: http://siteresources.worldbank.org/INTEGYPT/Resources/EGYPT-Web_brief-2010-AM.pdf.
14. **CAPMAS** (Central Agency for Public Mobilization and Statistics) **2010**. Egypt in Figures 2010. Cairo: CAPMAS. 31(данные за II квартал 2009г.).
15. **Elagati M. (2013),** Foreign Funding in Egypt after the Revolution // URL: https://www.files.ethz.ch/isn/162759/WP_EGYPT.pdf.
16. **Goldstone J. (2014),** Revolutions: A Very Short Introduction. Oxford: Oxford University Press. 2014. 160 p.
17. **Goldstone J. (2011),** Understanding the Revolutions of 2011. – Foreign Affairs. 2011. Vol. 90. No. 3. P. 8-16.
18. **Grinin L., Korotayev A. (2011),** The Coming Epoch of New Coalitions: Possible Scenarios of the Near Future. – World Futures. 2011. Vol. 67. No. 8. P. 531-563. DOI: http://dx.doi.org/10.1080/02604027.2011.625749.

19. **Housseini B. (2009),** Middle-eastern and North African NGOs' Participations in the United Nations Economic and Social Council: Current Situation, Challenges and Solution. Website UN. Department of Economic and Social Affairs. 2009 // URL: http://csonet.org/content/documents/MENA.pdf Stangler D., Litan R. (2011). In Egypt, will an Economic Revolution Follow? Inc February 12. URL: http://www.inc.com/articles/201102/egyptentrepreneurial-revolution.html.
20. **Lang J., De Sterck H. (2014),** The Arab Spring: A Simple Compartmental Model for the Dynamics of a Revolution. – Mathematical Social Sciences. 2014. Vol. 69. P. 12-21. DOI: http://dx.doi.org/10.1016/j. mathsocsci.2014.01.004.
21. **Pitchford R. (2011),** UPDATE 1-Egypt Plans Stimulus Package after Blow to Growth. Reuters 22.02.2011. URL: http://www.reuters.com/article/2011/02/22/egypt-finance-idUSLDE71L2GP20110222
22. **Siam G., Abdel Rady, H. M. (2010),** The Impact of the Global Food Crisis and the Economic Crisis on Poverty in Egypt. Paper presented at Inauguration Conference for Launching the Working Paper Series of the Information and Decision Support Center of the Egyptian Cabinet of Ministers (Cairo, March 28, 2010).
23. **Transparency International (2010)**, Corruption Perceptions Index 2010. Berlin: Transparency International, 8-14.
24. **UNDP (2010),** The Real Wealth of Nations: Pathways to Human Develop ment. Human Development Report 2010. 20th Anniversary Edition / Ed. by J. Klugman. New York, NY: The UNDP Human Development Report Office/ Palgrave Macmillan, 152-155. 161-163.
25. **Volpi F. (2014),** Framing Political Revolutions in the Aftermath of the Arab Uprisings. – Mediterranean Politics. 2014. Vol. 19. No.1. P. 153-156. DOI: http://dx.doi.org/10.1080/13629395.2013.856186.

26. **Weyland K. (2012),** The Arab Spring: Why the Surprising Similarities with the Revolutionary Wave of 1848? – Perspectives on Politics. 2012. Vol. 10. No. 4. P. 917-934. DOI: http://dx.doi.org/10.1017/S1537592712002873.
27. **World Bank (2011),** World Development Indicators Online. Washington, DC: world bank. url: http://data.worldbank.org/indicator (1980-2008).

REFERENCES

1. **Veryugin I., Turk S. (2020),** Arabskaya vesna v Yegipte: prichiny i posledstviya /Arab Spring in Egypt/: Causes and Consequences, Epoch of Science No. 22. pp. 314-317: DOI 10.24411/2409-3203-2020-12270.
2. **Volsky A. (2011),** Dni gneva /Days of Wrath/. NTV, February 6. URL: http://ip.ntv.ru/news/21442.
3. **Ermina N. (2021),** «Sverkhnovaya revolyutsionnaya situatsiya»: obshchestvennyy vzlom bez lidera ili upravlyayemaya transformatsiya sistem? /"A Super-New Revolutionary Situation": Social Collapse Without a Leader or Controlled Transformation of Systems?/, RIAC. April 13// https://russianconcil.ru/analytics-and-comments/analytics/sverkhnovaya-revolyutsionnaya-situatsiya-obshchestvennyy-slom-bez-lidera-ili-upravlyaemaya-transform/.
4. **Korotaev A., Zinkina Yu. (2011)**, Yegipetskaya revolyutsiya 2011 goda: sotsiodemograficheskiy analiz /The Egyptian Revolution of 2011: Sociodemographic Analysis/, Historical Psychology and Sociology of History. N2 // https://cyberleninka.ru/article/n/egiptskaya-revolyutsiya-2011-goda-sotsiodemograficheskiy-analiz
5. **Korotaev A., Khalturina D. (2009),** Sovremennyye tendentsii mirovogo razvitiya /Modern trends in world development/, Moskow, ЛИБРОКОМ/ URSS., 103-116.
6. **Korotaev A., Zinkina Yu. (2011),** Yegipetskaya revolyutsiya 2011 g. /Egyptian revolution of 2011/. Asia and Africa today. 6(647): 10–16; 7(648): 15–21.
7. **Malkov S., Isaev L., Korotaev A., Kuzminova E. (2013),** O metodike teku¬shchego sostoyaniya i prognoza sotsial'noy nestabil'nosti: opyt kolichestvennogo ana¬liza sobytiy

Arabskoy vesny /On the methodology of the current state and forecast of social instability: experience of quantitative analysis of the events of the Arab Spring/, Polis. Political studies. No. 4. P. 137-163.

8. **Neyzhmakov M. (2011),** Besporyadki v Yegipte: komu eto vygodno? /Unrest in Egypt: Who Benefits?/ Rabkor.ru January 28. URL: http://www.rabkor.ru/debate/11867.html.
9. **Fituni L. (2012),** «Arabskaya vesna» v global'nom i regional'nom izmereniyakh, Protestnyye dvizheniya v arabskikh stranakh. /"Arab Spring" in the global and regional dimensions/, Protest movements in Arab countries. Prerequisites, features, prospects. Proceedings of the Round Table conference. Center for Civilizational and Regional Studies of the Institute for African Studies of the Russian Academy of Sciences (May 30, 2011) / Ed. I.V.Sledzevsky, A.D.Savateev. -M., 2012, p. 77.
10. **Shangaraev R., Kashina A. (2021),** Desyat' let «arabskoy vesny» v Yegipte i Tunise: itogi i perspektivy /Ten years of the "Arab Spring" in Egypt and Tunisia: results and prospects/. Observer. 8/2021, p. 87. DOI: 10.48137/2074-2975_2021_8_81.
11. **Akaev A., Sadovnichy V., Korotayev A. (2012)**, On the dynamics of the world demographic transition and financial-economic crises forecasts. The European Physical Journal Special Topics, 205(1), pp. 355–373. https://doi.org/10.1140/epjst/e2012-01578-2.
12. **Beck C. (2014)**, Reflections on the Revolutionary Wave in 2011. – Theory & Society. 2014. Vol. 43. No. 2. P.197-223. DOI: http://dx.doi.org/10.1007/s11186-014-9213-8.
13. **Boubacar S., Herrera S., Yamouri N., Devictor X. (2010),** Egypt Country Brief. Washington, DC: World Bank. URL: http://siteresources.worldbank.org/INTEGYPT/Resources/EGYPT-Web_brief-2010-AM.pdf.
14. **CAPMAS** (Central Agency for Public Mobilization and Statistics) **2010**. Egypt in Figures 2010. Cairo: CAPMAS. 31(данные за II квартал 2009г.).
15. **Elagati M. (2013),** Foreign Funding in Egypt after the Revolution // URL: https://www.files.ethz.ch/isn/162759/WP_EGYPT.pdf.

16. **Goldstone J. (2014),** Revolutions: A Very Short Introduction. Oxford: Oxford University Press. 2014. 160 p.
17. **Goldstone J. (2011),** Understanding the Revolutions of 2011. – Foreign Affairs. 2011. Vol. 90. No. 3. P. 8-16.
18. **Grinin L., Korotayev A. (2011),** The Coming Epoch of New Coalitions: Possible Scenarios of the Near Future. – World Futures. 2011. Vol. 67. No. 8. P. 531-563. DOI: http://dx.doi.org/10.1080/02604027.2011.625749.
19. **Housseini B. (2009),** Middle-eastern and North African NGOs' Participations in the United Nations Economic and Social Council: Current Situation, Challenges and Solution. Website UN. Department of Economic and Social Affairs. 2009 // URL: http://csonet.org/content/documents/MENA.pdf Stangler D., Litan R. (2011). In Egypt, will an Economic Revolution Follow? Inc February 12. URL: http://www.inc.com/articles/201102/egyptentrepreneurial-revolution.html.
20. **Lang J., De Sterck H. (2014),** The Arab Spring: A Simple Compartmental Model for the Dynamics of a Revolution. – Mathematical Social Sciences. 2014. Vol. 69. P. 12-21. DOI: http://dx.doi.org/10.1016/j. mathsocsci.2014.01.004.
21. **Pitchford R. (2011),** UPDATE 1-Egypt Plans Stimulus Package after Blow to Growth. Reuters 22.02.2011. URL: http://www.reuters.com/article/2011/02/22/egypt-finance-idUSLDE71L2GP20110222
22. **Siam G., Abdel Rady, H. M. (2010),** The Impact of the Global Food Crisis and the Economic Crisis on Poverty in Egypt. Paper presented at Inauguration Conference for Launching the Working Paper Series of the Information and Decision Support Center of the Egyptian Cabinet of Ministers (Cairo, March 28, 2010).
23. **Transparency International (2010)**, Corruption Perceptions Index 2010. Berlin: Transparency International, 8-14.

24. **UNDP (2010),** The Real Wealth of Nations: Pathways to Human Develop ment. Human Development Report 2010. 20th Anniversary Edition / Ed. by J. Klugman. New York, NY: The UNDP Human Development Report Office/ Palgrave Macmillan, 152-155. 161-163.
25. **Volpi F. (2014),** Framing Political Revolutions in the Aftermath of the Arab Uprisings. – Mediterranean Politics. 2014. Vol. 19. No.1. P. 153-156. DOI: http://dx.doi.org/10.1080/13629395.2013.856186.
26. **Weyland K. (2012),** The Arab Spring: Why the Surprising Similarities with the Revolutionary Wave of 1848? – Perspectives on Politics. 2012. Vol. 10. No. 4. P. 917-934. DOI: http://dx.doi.org/10.1017/S1537592712002873.
27. **World Bank (2011),** World Development Indicators Online. Washington, DC: world bank. url: http://data.worldbank.org/indicator (1980-2008).

Лилия Арутюнян

Политические, социально-экономические причины и последствия конфликта «Арабская весна» в египте

Закючение

Ключевые слова и выражения: «Арабская весна», конфликт, социально-психологический, Египет, толпа, бедность, революция.

В статье обсуждаются политические, социально-экономические причины и последствия революционных движений (конфликта), которые произошли в первой и второй декадах XXI века на Ближнем Востоке, в частности, в Египте и получили название «Арабская весна».

Основная цель статьи заключается в сравнительном анализе подходов различных ученых-исследователей в области изучения общественных восстаний и акций протеста.

Мы исследовали и проанализировали причинность общественных восстаний в Египте, формы их проявления в контексте методологии группового

поведения, теории депривации, принципов мобилизации ресурсов и психологии толпы.

В результате исследования мы пришли к выводу, что бедность населения, низкий образовательный ценз, высокий уровень безработицы, инфляция, отсутствие механизмов социальной защиты и коррупция не были теми основными причинами, которые, как говорят, стали основанием для революции и восстаний в Египте в 2010-2011 годах.

Основную роль в причинности конфликта «Арабской весны» сыграли социально-психологические факторы — особенности и механизмы группового поведения, депривации, мобилизации ресурсов и психологии толпы.

Для повышения эмоциональности участников восстаний и акций протеста использовались механизмы влияния вышеупомянутых социально-психологических явлений. Для увеличения их воздействия и обеспечения эффективности их действия также осуществлялись специальные вмешательства со стороны внешних сил.

Lilia Harutyunyan

Political, socio-economic causes and consequences of the "Arab Spring" conflict in Egypt

Conclusion

Key words and expressions: *"Arab Spring" conflict, socio-psychological, Egypt, crowd, poverty, revolution.*

This article discusses the political and socio-economic causes and consequences of the revolutionary movements (conflict) that took place in the first and second decades of the 21st century in the Middle East, particularly in Egypt, known as the 'Arab Spring.'

The primary objective of the article is to provide a comparative analysis of various approaches by different experts-researchers in the study of social uprisings and protests. We have studied and analyzed the causality of social uprisings in Egypt in the context of group behavior methodology, deprivation theory, resource mobilization principles, and crowd psychology.

As a result of the study, we concluded that poverty among the population, low educational standards, high unemployment rates, inflation, lack of social security mechanisms, and corruption were not the main causes that, as it is said, provided the groundwork for the revolution and uprisings in Egypt in 2010-2011.

The main role in the causality of the 'Arab Spring' conflict was played by socio-psychological factors—group behavior, deprivation, resource mobilization, and the psychological characteristics and mechanisms of the crowd. Mechanisms of the influence of the aforementioned socio-psychological phenomena were used to increase the emotionality of the participating population in protests and demonstrations. To expand their influence and ensure the effectiveness of their functioning, special interventions were carried out by external forces as well.

Լիլիա Հարությունյան – Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Կիրառական հոգեբանության ամբիոնի հայցորդ), lilia.harutyunian@gmail.com

Лилия Арутюнян - Армянский государственный педагогический университет имени Х. Абовяна, Соискатель кафедры прикладной психологии lilia.harutyunian@gmail.com

Lilia Harutyunyan - Armenian State Pedagogical University named after Kh. Abovyan, Applicant of Chair of Applied Psychology, lilia.harutyunian@gmail.com

Խմբագրություն է ուղարկվել 02.06.2025թ.
Հանձնարարվել է գրախոսության 15.06.2025թ.
Հրապարակման է ներկայացվել 20.06.2025թ.